

ՀԱՅԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆԸ ՖԷՕԴՈՐ ՏԻՒՏՉԵՒԻ  
BEGLETS (ՓԱԽՍՏԱԿԱՆԸ) ՎԷՊՈՒՄ

ԼԻԼԻԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ  
lina.hovakimyan@gmail.com

Հայաստանի թեման ռուս գրականության դասականների ստեղծագործություններում ուսումնասիրուած է ամենայն մանրամասնութեամբ: Սկսած պուշկինեան դասագրքային Puteshestvie V Arzrumից (ճանապարհորդութիւն դէպի Էրզրում) ընդհուպ մինչեւ Ի. դարի վերջին գրուած ստեղծագործությունները՝ հայի եւ հայկականի յիշատակումը չի վրիպել գրաքննադատների ու պատմաբանների ուշադրութիւնից<sup>1</sup>: Սակայն գեղարուեստական ստեղծագործութեան աշխարհը հետաքրքիր ու գրաւիչ է նաեւ գաղտնիքներով եւ դրանց բացայայտումներով:

Ռուս գրող Ֆեօդոր Տիւտչեւի (1860, Ժընեւ-1916, Բերդիչեւ) գրական ստեղծագործութիւնը քիչ է յայտնի ոչ միայն ընթերցասէրներին, այլեւ գրականագէտներին: Սակայն այս անունը սերտօրէն կապուած է ԺԹ. դարի ռուս գրականութեանը եւ առաջին հերթին իր հօր՝ ռուս մեծ բանաստեղծ Ֆեօդոր Տիւտչեւի (1803-1873) միջոցով: Վերջինս համարուած է ռուսական քերթութեան 'ոսկեդարի' վերջին ներկայացուցիչը: Տաղանդաւոր բանաստեղծը նաեւ փայլուն դիւանագէտ էր: Լինելով աշխարհի քաղաքական ամենասուր եւ հրատապ հարցերի կիզակէտում՝ Տիւտչեւը մշտապէս մտահոգուել է իր հայրենիքի՝ Ռուսաստանի ապագային վերաբերող խնդիրներով: Այս տեսանկիւնից հետաքրքրական է նրա 'Արեւելք-Արեւմուտք' հայեցակարգը, որտեղ խօսուած է Օսմանեան Կայսրութեան լծի տակ գտնուող ժողովուրդների ճակատագրի մասին<sup>2</sup>: Հայ գրականագէտների վկայութեամբ, իր հրապարակախօսական յօդուածներում Տիւտչեւն ուղղակիօրէն չի անդրադարձել հայ ժողովրդի ճակատագրին<sup>3</sup>: Բայց եւ այնպէս նրան չէր կարող չյուզել քրիստոնէայ հայ ազգի քաղաքական եւ կրօնական կեղեքումը<sup>4</sup>:

1850ին Տիւտչեւի կեանքում տեղի ունեցաւ մի իրադարձութիւն, որն ամբողջովին փոխեց նրա կեանքը՝ նա հանդիպեց եւ սիրեց քսանչորսամեայ Ելենա Դենիսեւային: Ո՛չ Տիւտչեւի տարիքը, ո՛չ էլ նրա՝ ընտանիքի հայր եւ ամուսին լինելու հանգամանքը խոչընդոտ դարձան այս կապի համար, որը տեւեց մօտ տասնչորս տարի: Այս կապից ծնունդին երեք զուակներ՝ դուստր եւ երկու որդի: Ապօրինի յարաբերութիւնները դատապարտուեցին ռուս բարձրաշխարհիկ հասարակութեան կողմից, ինչն էլ իր հերթին ազդեց Դենիսեւայի առանց այդ էլ թոյլ առողջութեան վրայ: 1864ին նա մահացաւ թոքախտից<sup>5</sup>: Յաջորդ տարուայ ընթացքում նոյն հիւանդութիւնից մահացան նրանց երկու երեխաները, ողջ մնաց միայն ա-

ւագ որդի Ֆեօդորը: Տիւտչե-հայրը չափազանց ծանր տարաւ սիրած կնոջ եւ երկու երեխաների կորուստը: Նոյնիսկ աւագ որդին՝ Ֆեօդորը, չէր կարող ամոքել նրա վիշտը: Մօր մահից յետոյ Տիւտչե-կրտսերը դաստիրակուում էր բարեկամների տանը, եւ շատ քիչ էր շփուում հօր հետ: Ապօրինի գաւակ լինելու հանգամանքը թոյլ չէր տալիս Ֆեօդորին՝ հօրից ժառանգել ազնուականի տիտղոսը: Սակայն Տիւտչե-կրտսերի ժառանգածն աւելին էր. նրան փոխանցուեց հօր գրական տաղանդը:

Թէեւ մեծ էր գրականութեամբ զբաղուելու Տիւտչե-կրտսերի փափագը, սակայն ընկերային դժուարութիւնները ստիպեցին նրան ընտրել զինուորական ասպարէզը: Նախնական կրթութիւնը ստանալուց յետոյ, նա անցնում է զինուորական ծառայութեան՝ սահմանային զօրքերում: Ծառայութեանը զուգահեռ Տիւտչե-կրտսերը սկսում է գրական գործունէութիւնը՝ գործակցելով տարբեր ամսագրերի, թերթերի հետ:

1894ին Տիւտչե-կրտսերը նշանակուում է Էրիւանի սահմանային բրիգադում ծառայութեան: Հենց այստեղ՝ Թուրքիայի, Իրանի եւ Ռուսաստանի սահմանին էլ ծաւալուում են 1902ին գրուած նրա *Beglets* վէպի իրադարձութիւնները:

Հայն ու հայկականը վէպ 'մուտք են գործում' առաջին իսկ էջից. «1876 թ. Յուլիսեան շոգ մի օր Նացուայլի քաղաքից 7 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող խուլ եւ մոայլ Այաջինեան Կիրճով, որը Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ սահման էր ծառայում իր միջով հոսող Արաքս գետով, հայ բնիկի խղճուկ ցնցոտիներ հագած 19-20 տարեկան մի երիտասարդ էր անցնում»<sup>6</sup>:

Չդառնալով հիմնական՝ այս թեման արտայայտիչ կերպով անցնում է ողջ ստեղծագործութեան միջով, արտացոլելով այս արկածային ստեղծագործութեան հիմքը կազմող թեմաների, իրադարձութիւնների, պատմական փաստերի, բարոյական խնդիրների ողջ բազմազանութիւնը: Վէպը որոշակիօրէն անդրադառնում է 1876ի ամռանը՝ 1877-1878ի ռուս-թուրքական պատերազմի նախօրէին: Սակայն գալիք պատերազմի մասին խօսուում է միայն ստեղծագործութեան կարճ նախաբանում: Վէպի 48 գլուխներից նախաբանին յատկացուած է 7ը: Կարապետ Մնացեկանովը, որը ողջ վէպի կտրուածքով երկրորդական գործող անձ է, այս եօթ գլուխների գլխաւոր հերոսն է, քանի որ հենց նրա երեք հանդիպումները երեք տարբեր գործող անձանց հետ կազմում են այդ եօթ գլուխների դիպաշարային հիմքը: Առաջինը հանդիպումն է վէպի գլխաւոր հերոսի՝ «հայ բնիկի խղճուկ ցնցոտիներ հագած», խորհրդաւոր երիտասարդի, ապագայ ահեղ Մուրթուզ-աղայի հետ: Ահա թէ ինչպէս է նկարագրուած այդ հանդիպումը Տիւտչեի վէպում. «Տեսնելով ջուրը՝ ճամփորդն ուրախութիւնից անսպասելի ճչաց եւ մոռանալով յոգնածութիւնը՝ նետուեց դէպի ջրամբարը: Երկար խմեց, տապից շիկացած դէմքը սուղելով սառը ջրի մէջ. երբ

*վերջապէս, յագեցնելով ծարար, բարձրացրեց գլուխը, հանդիպեց ճերմակած յօնքերի տակից իր վրայ ուղղուած գոյգ սեւ աչքերի ուշադիր հայեացքին: Այս աչքերը նիհար մի ծերուկի էին, ով Անդրկովկասի հարուստ հայերին պատշաճ կերպով էր հագնուած. սեւ բրդեայ չերքեզական չուխս, որի կրծքին փամփոշտակալներ էին կարուած, իրանը կապող արծաթէ գօտուն ամրացուած էին արծաթէ պատեանով դաշոյնը եւ արծաթագորդ կաշուէ թամբապայուսակը, որից երեւում էր ատրճանակի բռնակը պարանոցով անցկացուած նեղ տրեզաւոր ժապաւէնով»<sup>7</sup>:*

Այսպէս է սկսում *Պեկլէց* վէպի դիպաշարային հանգուցաւորումը: Այս, ինչպէս նաեւ երկու միւս հանդիպումները, շարունակութիւն չեն ունենում վէպի բովանդակութեան յետագայ զարգացման ընթացքում եւ դառնում են լոկ հեռաւոր արձագանգ: Սակայն հայ ընթերցողի համար այդ փոքր հատուածները ատելի քան նշանակալի են, քանի որ այստեղ խօսքն արդէն իսկ յիշատակուած ապագայ ռազմական գործողութիւնների Հայաստանի համար կարեւոր իրադարձութիւնների մասին է: Այս տեսանկիւնից յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում Գարապետ Մնացեկանովի եւ Ս. Ստեփանոս վանքի<sup>8</sup> վանահայր Աստուածատուր Տէր-Խաչատուրեանցի երկխօսութիւնը. «Մը. Ստեփանոսի վանքը, ուր հիմա ուղեւորում էր Գարապետ Մնացեկանովը, հայ հնագոյն սրբավայրերից մէկն է եւ ժամանակին մեծ նշանակութիւն ունէր իբրեւ քրիստոնէական պատուար իր համար թշնամական մուսուլմանների մէջ: Ամայի սարերում կառուցուած այս վանքը բոլոր կողմերից շրջապատուած էր բացառապէս ոչխարների անթիւ բազմացած հօտերով եւ ւազակութեամբ զբաղուող վայրի քրդական ցեղերով: Վանքի սուրբ հայրերից մեծ ձկունութիւն եւ խորամանկութիւն էր պահանջում նման անհանգիստ, արնախում եւ դաժան հարեւանների կողքին գոյատեւելու համար: Սուջինեան Խանութեան իշխան Չինգիզ աղայի անեղ կառավարումը, ում հետ վանքը առատ եւ յաճախակի փեշքէշների շնորհիւ բարեկամութիւն էր պահպանում, եւ հարեւան ուղղափառ Ռուսաստանի հանդէպ տաժաժ սարսափը զսպում էր անսանձ վայրենիներին՝ վանքի վրայ հրով եւ սրով յարձակումներից, որը նրանց միշտ հեշտ եւ համեղ աւար էր թւում»<sup>9</sup>:

*Պեկլէց* վէպը լի է դիմապատկերային նկարագրութիւններով: Տիտ-չելը իւրաքանչիւր հերոսի համար կարողացել է գտնել դիմանկարային բնութագրութիւնների յստակ եւ հոգեբանօրէն ճշգրտուած մանրութիւններ: Աստուածատուր Տէր-Խաչատուրեանցը բացատրութիւն չէ. «սենեակում փայլատ կափարիչով պատի լամպի եւ բարձր պղնձէ մոմակալում դրուած երկու մոմերի լոյսի տակ պարսկական գորգով ծածկած թախտին նստած էին Գարապետ Մնացեկանովը եւ սեւ սքեմով, թաւշեայ խոյրով բարձրահասակ նիհար վանականը: Վանականի ալեխառն սեւ

*ւօրուքը հովհարաձէ իջնում էր կրծքին՝ ընդգծելով դէմքի գունատութիւնը, որի փայլատ ճերմակութիւնն աւելի վառ էր դարձնում խիտ յօնքերի տակից նայող մեծ սեւ աչքերի փայլը: Երկար փարթամ գանգուր մազերը, խառնուելով փառահեղ մօրուքի հետ, ընկնում էին վանականի ուսերին»<sup>10</sup>:*

Մնացեկանովի կերպարի հետ ուղղակիօրէն եւ միջնորդուած առնչում են վէպում Տիւտչէի կողմից արժարձուած որոշ թեմաներ: Դա է՝ աշխարհի անկատարութեան ու թշնամական լինելու, ե՛ւ հայրենիքին անձնուիրաբար ծառայելու թեմաներն են: Մահացու վտանգաւոր է այն առաքելութիւնը, որն իրականացնելու համար Մնացեկանովը գաղտնի մեկնում է Թուրքիա: Տիւտչէը հրաժեշտ է տալիս այդ հերոսին վէպի ամենասկզբում, սակայն մտաբերում է նրան վերջում՝ պատմելով դաժան եւ խարդախ Չինգիզ խանի դաւաճանութեան պատճառով նրա ողբերգական վախճանի մասին: Ժամանակի եւ աշխարհի դաժանութեան եւս մի վկայութիւն: «*Ինչպէս արդէն ասացի՝ հայր ռուսական լրտես էր: Այն ժամանակ Ռուսաստանը Թուրքիայի հետ պատերազմի էր պատրաստում, եւ կովկասեան զինուորական իշխանութիւնները հայ լրտեսներ էին ուղարկում սահմանի վրայ գտնուող թուրքական բերդերի ու հակառակորդի զինուած ուժերի վերաբերեալ տեղեկութիւններ հաւաքելու համար: Նման լրտեսներից էր նաեւ իմ հանդիպած հայր: Նա խելացի եւ հմուտ մի ծերուկ էր, ով գուրկ չէր խիզախութիւնից եւ անգամ պատրաստ էր ինքնազոհութեան: Աւաղ, այդ տարի նա Թուրքիա ուղեւորուած բոլոր լրտեսների դաժան բախտին արժանացաւ. նրան շատ շուտ բացայայտեցին եւ առանց օրէնքը պահպանելու՝ կախաղան հանեցին: Այնուամենայնիւ, ինչպէս ես յետագայում իմացայ, նրա մահուան մէջ մեղաւոր էր Սուլթանեան խանութեան այսօրուայ տիրակալ Խայլար-խանի հայրը՝ Չինգիզ-խանը: Միմեանց վրայ յարձակուելու պատրաստուող երկու հզօր հարեւանների արանքում յայտնուելով՝ Չինգիզ-խանը ջանում էր երկուսին էլ հաճոյանալ: Հաճոյանալով Ռուսաստանին՝ նա օգնեց իմ յիշատակած հայ լրտեսին անարգել եւ հմտօրէն մտնել Թուրքիա եւ որոշ տեղեկութիւններ հաւաքել, որոնք անզգուշօրէն նոյն Չինգիզ-խանի միջոցով նա փոխանցեց Ռուսաստան: Սա նրա կողմից թոյլ տուած աններելի սխալ էր, քանի որ տեղեկութիւնները Ռուսաստան հասցնելով՝ Չինգիզ-խանը համարեց, որ ռուսների հանդէպ իր ստանձնած առաքելութիւնը կատարուած է եւ որ ժամանակն է թուրքերին հաճոյանալ: Այս միջոցին նա շտապեց հարեւան վիլայէթի փաշային յայտնել այնտեղ բնակուող ռուսական լրտեսի մասին: Այսպիսով ե՛ւ ռուսների, ե՛ւ թուրքերի համար Չինգիզ-խանը լաւ հարեւան հանդիսացաւ: Իրենից դժգոհ կարող էր լինել միայն խեղճ հայր, ով անսպասելիօրէն մի տխուր օր յայտնուեց բաւականին բարձր ճիւղին»<sup>11</sup>:*

Սուր միտքը եւ մասնագիտական հետաքրքրասիրութիւնը Տիւտչեւին դրդել են ուսումնասիրելու եւ իրացնելու ինչպէս տեղի սովորոյթները, այնպէս էլ լեզուն, ինչը վկայում են վեպը ուղեկցող հեղինակային ծանօթագրութիւնները: Այսպէս, օրինակ, խիտ, մանրամասներով հարուստ նկարագրական վեպում առկայ են հետեւեալ հայերէն բառերը եւ դրանց հեղինակային բացատրութիւնները՝

*Պանիր – ոչխարի աղի պանրի տեսակ:*

*Լաւաշ – Կովկասում բարակ, մեծ բլիթների տեսքով հաց. Ճանապարհ գնալիս բնիկները փշրել են այն եւ լցրել կտորէ պարկերի մէջ:*

*Հազարփէշ (ռուսերէնում տրուած է ազարպէշ ձեւով) – այստեղ շրջող գաւաթ: Պատրաստել են քարայծի սմբակից եւ զարդարել արծաթով: Հանդիսաւոր ճաշկերոյթների ժամանակ այն շրջանով փոխանցուել է տանտէրից հիւրերին<sup>2</sup>:*

Վեպի դիպաշարային հիմքը Լիդիայի, խորհրդաւոր Սուրթուր-աղայի եւ մերժուած գնդային սպայ Վոյնիովի սիրային յարաբերութիւնների պատմութիւնն է: Վեպի լարուած դիպաշարային գիծը երիտասարդ տարիներին Սուրթուր-աղայի գործած ոճրագործութեան բացայայտումն է: Սակայն Տիւտչեւն այնպէս է կառուցել դիպաշարային յօրինուածքը, որ հիմնական թեման ունի բազմաթիւ ճիւղաւորումներ՝ փոքր պատմուածքների, ականդագրոյցների, յուշերի տեսքով: Այդ դրուագները, որոնք իրատեսակ ձեւով սփռուած են վեպի կտաւում, հնարաւորութիւն են տալիս հեղինակին ընդլայնելու պատմութեան շրջանակները՝ խորանալով չարի եւ բարու մշտնջենական հարցերում: Այդ պատմուածքներից մէկը բախտի բերումով դաժան Եուսուֆ-խանի հարձը դարձած հայ գեղեցկուհի Զառա Յունանեանի ողբերգական ճակատագրի, ստելի գերութիւնից համարձակ հայ նկարչի կողմից նրա չիրակաւնացած ազատագրման պատմութիւնն է: «Մի Պատի Պատմութիւն»։ Այսպէս է Տիւտչեւն անուանել վեպի այն գլուխը, որտեղ ներկայացրել է փախչելու փորձ կատարածների հանդէպ դաժան հաշուեյարդարը. նրանք կենդանի թաղուել են այն պատի մէջ, որի վրայ պատկերուել էր անհնազանդ գեղեցկուհի Զառայի դիմանկարը: Երիտասարդների մահուան պատճառը նրանց քրիստոնէայ լինելն էր:

Քրիստոնէութեան եւ մահմեդականութեան թեման չէր կարող չարձարծուել Տիւտչեւի կողմից նաեւ վեպում կատարուող իրադարձութիւնների վայրերի աշխարհագրութեան, ինչպէս նաեւ ժամանակագրական ենթախորքի պատճառով: Շրջանցելով ռուս-թուրքական պատերազմի իրադարձութիւնները, վեպի հիմնական գործողութիւնը տեղափոխելով քսան տարի առաջ՝ Տիւտչեւն, այնուամենայնիւ, չի շրջանցում կրօնական, Արեւելքի եւ Արեւմուտքի լայն իմաստով դիմակայութեան բարդ ինդիքները՝ դրանք վերհանելով երկխօսութիւններում, բանավեճերում,

հերոսների մտորումներում: Այդ ամենը հարստացնում է վեպի իմաստը՝ սիրային-հոգեբանականից վերածելով բարոյա-էթիկականի:

Արձակագիր Տիտչեւ-կրտսերը հաւատարիմ է մնում իր բանաստեղծ հօր՝ ԺԹ. դարի բնապատկերային քնարերգութեան վարպետի ստեղծագործական աւանդոյթին: Հրաշալի, բայց նաեւ խստաշունչ բնութեան նկարագրութիւնները *Պելկէց* վեպին հաղորդում են իւրայատուկ հմայք եւ վկայում հեղինակի գեղարուեստական բարձր վարպետութեան մասին: Տեղանքի, բնակավայրերի վաղուց մոռացուած եւ կորսուած անունների շարքում հայ ընթերցողի աչքը կառչում է ծանօթ անունումներից: Այդ անունումների շարքում իշխում է Արարատը:

Արարատը յատուկ, առանձին թեմա է Հայաստանի մասին գրակա-նութեան մէջ ընդհանրապէս եւ ռուս գրականութեան մէջ՝ մասնաւորապէս: Նրա աստուածաշնչական վեհութիւնը, որը գերում է ամէն հանդիպման ժամանակ, արտացոլուած է Հայաստան այցելած ռուս գրողների ստեղծագործութիւններում: Հարկ է նշել, որ Տիտչեւ-կրտսերը, որոշ չափով լինելով բանաստեղծ-նորարարների ժամանակակից, 1902ին գրուած *Պելկէց* վեպում Արարատի նկարագրութեամբ նախանշում եւ միաժամանակ կարծես բացայայտում է այդ թեման արդէն Բ. դարում: «Նրանց առջեւ տասը վերստ երկայնքով սփռուած էր Արաքսի հովիտը, որի միջով արեւից արծաթափայլ եւ քմահաճ գալարուող գետն էր անցնում: Բազմաթիւ լճերը, լճակներն ու ջրամբարները փայլում էին արեւի շողերի տակ եւ կարծես ծառերի մուգ կանաչով թաւշէ շրջանակի մէջ առած հայելու փոքրիկ ցոլանքներ լինէին: Այգիների վառ կանաչի մէջ սուզուած, երեւում էին մանկական խորանարդիկներ յիշեցնող սպիտակ տնակներով գեղատեսիլ կերպով սփռուած գիւղերը: ...զմայլուելով Արաքսի հովտի տեսարանով՝ Լիդիան շրջեց իր ձիւն, եւ նրա աչքի առջեւ բացուեց աւելի վեհաշուք մի տեսարան: Նրա առաջ, իշխելով սեփական վիթխարիութեամբ եւ ուրուագծերի պարզութեամբ, փայլում էր վիթխարի Արարատի ձիւնածածկ գագաթը: Նրա ձիւնէ գլխարկը փայլում էր արեւի տակ, շողշողում, կարծես աղամանդներով պատուած լինէր: Փոքր Արարատը, որի վրայ վաղուց արդէն հալուել էր վերջին ձիւնը, խոնարհ սեղմել էր իր ալեհեր գլուխը մեծ հզօր եղբոր ուսին: Ձիւնածածկ շերտից անդին, որը կարծես անսահման վեհութեամբ էր շնչում, սկսում էր կանաչը սկզբում մուգ եւ թոյլ, տեղ-տեղ քարերի մի ամբողջ զանգուածով ընդհատուող, սպա՛ որքան ցածր իջնող, այդքան աւելի վառ, ուրախ, կարծես ժպտացող»<sup>13</sup>:

Տիտչեւի սոյն նկարագրութիւնը հարկ է համեմատել արդէն դասագրքային դարձած, հայ ընթերցողի համար գեղարուեստօրէն գնահատուած Բ. դարի սկզբի ռուս մեծ բանաստեղծների, «Արծաթէ Դար»ի նշանաւոր ներկայացուցիչներ Անդրէյ Բելիի ու Օսիպ Մանդելշտամի նկա-

րագրութիւնների հետ՝ հասկանալու համար, որ տիւտչեւեան Արարատը հայոց աստուածաշնչական լեռան մասին բառերի թանկարժէք մանեակից ճակատագրի բերումով կորսուած մի հատուած է, որը այսօր վերագտաւ իր տեղը: Այս բառերով կարելի է նաեւ ամբողջութեամբ բնութագրել անշուշտ, տաղանդաւոր, իւրօրինակ գրող, իր հօր՝ Ֆեօդոր Տիւտչեւի եւ ողջ ռուս գրականութեան գրական ասանդոյթների շարունակող Ֆեօդոր Տիւտչեւ-կրտսերի ստեղծագործական ժառանգութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Salome Areshyan, *Armyanskaya Pechat I Tsarskaya Tsenzura* (Հայկական տպագրութիւնը եւ ցարական գրաքննութիւնը), Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1957. նաեւ՝ Kamsar Grigoryan, *Iz Istorii Rusko-Armyanskikh Literaturnikh I Kulturnikh Otnosheniy* (Ռուս-հայկական գրական եւ մշակութային կապերի պատմութիւնից), Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1977. նաեւ՝ Mikhail Amirkhanyan, *Russkaya Khudojestvennaya Literatura I Genotsid Armyan* (Ռուս գեղարուեստական գրականութիւնը եւ հայոց ցեղասպանութիւնը), «Հայաստան» Հրատ., 1990:
- <sup>2</sup> Fyodor Tyutchev, “Russia I Zapad” (Ռուսաստանը եւ Արեւմուտքը), *Polnoye Sobranie Sochinenii V 6-i Tomakh* (Երկերի լիակատար ժողովածու 6 հատորով), Հտր. 3, Մոսկուա, «Կլասիկա» Հրատ. Կենտրոն, 2002, էջ 195:
- <sup>3</sup> Karen Saparov, “Kontseptsiya “Vostok-Zapad”, *Materialy Mejdunarodnoy Nauchnoy Konferentsii, Posvyashchennoy 200-Letiyu F. I. Tyutcheva* (Տիւտչեւի 'Արեւելք-Արեւմուտք' հայեցակարգը, Ֆեօդոր Տիւտչեւի 200ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի նիւթեր), Երեւան, «Լինգուա», 2003:
- <sup>4</sup> Ի դէպ, 1897ին լոյս տեսած *Bratskaya Pomosh Postradavshim V Turtsii Armyanam* (Եղբայրական օգնութիւն թուրքիայում տուժած հայերին) ռուսերէն ժողովածուում առաջին անգամ տպագրուած «Կրկին այլալուում է...» բանաստեղծութեան հեղինակ նշուած է Ֆեօդոր Բուսնովիչ Տիւտչեւը: Ենթադրուել է, որ բանաստեղծութիւնը Տիւտչեւն անձամբ կարող էր փոխանցել Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչներից մէկին, քանի որ արտասահմանից վերադառնալուց յետոյ Տիւտչեւը ընտանիքով երկար տարիներ բնակարան է վարձել Նեւսկի պողոտայում գտնուող Լազարեանների տանը: Յայտնի է նաեւ, որ 1897ին, վերոյիշեալ բանաստեղծութիւնը գրելու տարում, Տիւտչեւը հանդիպում է ունեցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Դ.ի հետ (Saparov, նոյն): Սակայն վերջին ռուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ վերոյիշեալ բանաստեղծութեան հեղինակը ոչ թէ հայր, այլ որդի Տիւտչեւն է: Գրականագէտ Նինա Եւզենեւնա Ռազումովան, համեմատելով հայր եւ որդի Տիւտչեւների գրելաձևն ու թեմատիկան, նշել է. «*Իր հրապարակախօսական պայթումով Ֆ. Ֆ. Տիւտչեւը բաւականին մօտ էր իր հօր բանաստեղծական ժառանգութեան այն ծաւալուն հատուածին, որը նուիրուած է քաղաքական ամենասուր հարցերին: Այսպիսի նմանութեան վառ ապացոյցն է հանդիսանում հետեւեալ հետաքրքիր փաստը՝ Տիւտչեւ-որդու բանաստեղծութիւններից մէկը, որը զետեղուած էր նրա առաջին գրքում («Կրկին Այլալուում է Արեւելքը», Տիւտչեւի ստեղծագործութիւնները, 1888, էջ 14) հրատարակուել էր 1897ին լոյս տեսած Bratskaya Pomosh*

ժողովածուում «Ֆ. Բ. Տիտչևից» վերնագրի տակ» (N. E. Razumova, “Feodor Feodorovich Tyutchev. “Obyknovennyi Talant” (K Opredeleniyu Ponyatiya “Belletristika”)” (Ֆեոդոր Ֆեոդորովիչ Տիտչև, ‘սովորական տաղանդ’ (‘արձակագրություն’ հասկացողության սահմանում), *Sibirskiy Filologicheskii Jurnal*, 2008, no 4, Հրատ. Novosibirskiy Gosudarstvenniy Universitet, էջ 59): Այսպիսով՝ սխալմունքը կամ, ինչպես գրում է Ռազումովան, ‘հետաքրքիր փաստը՝ շարունակում է առ այսօր, թե՛ Սափարովի հետազոտություններում, թե՛ Ալբերտ Իսոյեանի կազմած եւ 2011ին լոյս տեսած *Chernaya Kniga (Znamenitnye Inostrantsy O Turetskikh Prestupleniyakh I O Genotsid Armyan)* (Մեւ գիրք. Նշանաւոր օտարերկրացիները թուրքական ոճիրների եւ Հայոց Ցեղասպանության մասին 1894-1923) ռուսերէն ժողովածուի մէջ (Երեւան, Հայագիտակ, 2012, էջ 23):

<sup>5</sup> Տե՛ս՝ Kiril Pigarev, *F. I. Tyutchev I Ego Poeticheskoe Nasledie* (Ֆ.Բ. Տիտչևեր եւ նրա բանաստեղծական ժառանգությունը), Հտր. 1, Մոսկուա, Պրաւդա, 1980, էջ 15:

<sup>6</sup> Feodor Tyutchev-son, *Beglets*, Մոսկուա, Միր Պրիկլիչենիյ, 1990, էջ 1:

<sup>7</sup> Նոյն:

<sup>8</sup> Ս. Ստեփանոս վանք (նաեւ՝ Մաղարդավանք), Թ. դարի հայկական կրօնական համալիր Իրանի հիւսիսում, 15 կլմ. դէպի հարաւ-արեւմուտք հեռաւորութեան վրայ Ջուղայ քաղաքից, Արաքս գետի աջ ափին բարձրացող Մաղարդայ Լեռան լանջին, հայկական Դարաշամբ բնակավայրից (այժմ՝ լքուած) մօտ 1 կլմ. Արեւելք: Յետագայ դարերում միքանի անգամ վերանորոգուել է: 1828ի Թուրքմէնչայի պայմանագրով Արաքս գետը դարձել է ռուս-պարսկական սահման, վանքը կորցրել է Նախիջեւանի ու Գողթնի իր թեմերը, իսկ Ատրպատականից հայերի արտագաղթից յետոյ՝ զրկուել եկամուտներից: Փակուել է դպրոցը, գրադարանի ձեռագրերը փոխադրուել են Էջմիածին: 2008ին այն գրանցուել է UNESCOի համաշխարհային ժառանգութեան մէջ՝ Սուրբ Թադէոսի եւ Օոր Օոր վանքերի հետ միասին՝ «Հայկական Եկեղեցիները Իրանում» անուան տակ:

<sup>9</sup> Feodor Tyutchev-son, *Beglets*, էջ 3:

<sup>10</sup> Նոյն, էջ 4:

<sup>11</sup> Նոյն, էջ 77-78:

<sup>12</sup> Նոյն, էջ 92:

<sup>13</sup> Նոյն, էջ 45-46:

THE ARMENIANS AND THE ARMENIAN TOPICS IN  
FEODOR TYUTCHEV’S NOVEL *BEGLETS* (THE ESCAPEE)

LILIAN HOVAKIMYAN  
lina.hovakimyan@gmail.com

The Russian writer Feodor Feodorovich Tyutchev’s (1860-1916) novel, *Beglets*, was written in 1902. Strangely enough, however, the Armenian characters and Armenian related topics of the novel have gone unnoticed by literary historians.

Hpvakimyan unravels the Armenian aspect of the novel, noting that the events take place partly in Armenia, where Tyutchev served as a Russian soldier on the Russo-Persian border of Erivan province. She briefly outlines the biography of Tyutchev and highlights his broad knowledge of Transcaucasia, its peoples and habits, which generated vivid descriptions and characters in *Beglets*.